ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ГУБЕРНИЯ
С. ВАРДАНАШЕН

REPUBLIK OF ARMENIA MARZ OF ARMAVIR VILLAGE VARDANASHEN

---

03.12.2012.

N 79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Պ-Ն Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի սույն գրությանը կից Ձեզ ենք ուղարկում Վարդանաշեն համայնքի ավագանու 30.11.2012թ. թվականին կայացած թիվ 7 նիստի որոշումները:

Առդիր՝ 12 թերթ

ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ/

11418-12
13 12 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի
Վարդանաշեն համայնք, 1-ին փողոց 26 շենք հեռ. 077 07 00 10

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30»նոյեմբեր 2012թվականի թիվ 18-Ա

## ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով // տեղական ինքնակառավարման մասին // Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

1. Հաստատել Արմավիրի մարզի Վարդանաշեն գյուղական համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 30-ի թիվ 7 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Արթուր Աղաջանյան
Արման Գևորգյան
Ջոհրաբ Բարսեղյան
Սուրեն Բաբաջանյան
Սպարտակ Սարգսյան
Կարեն Ղոնյան

կողմ ( 6 ) դեմ ( 0 ) ձեռնպահ ( 0 )

ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` /Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ/

2012թ. նոյեմբերի 30
Գ. Վարդանաշեն

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի
ավագանու 2012 թ. նոյեմբերի 30-ի
թիվ 18- Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳԸ

1. Վարդանաշեն համայնքի ավագանու 2012թվականի նոյեմբերի 30-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

(Զեկ. Ա. Մանուկյան)

2. Վարդանաշենի գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկի աշխատակցի 2013թ-ի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին :

(Զեկ. Ա. Մանուկյան)

3. Վարդանաշեն համայնքի 2013թվականի տեղական տուրքերի և վճարների հաստատման մասին:

(Զեկ. Ա. Մանուկյան)

4. Վարդանաշեն համայնքի թվով 15 սոցիալապես անապահով ընտանիքների ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

(Զեկ. Ա. Մանուկյան)

5. Վարդանաշեն համայնքի գյուղապետարանի թվով յոթ աշխատակիցների պարգևատրելու մասին:

(Զեկ. Ա. Մանուկյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի
Վարդանաշեն համայնք, 1-ին փողոց 26 շենք հեռ. 077 07 00 10

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30»նոյեմբերի 2012թվականի թիվ 19-Ա

## «ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ 2013Թ-Ի ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ԹԻՎ 19-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով „Տեղական Ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով .

1 Հաստատել Վարդանաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկի աշխատակցի 2013թ-ի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն N 1 և N 2 հավելվածների :

2 Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Արթուր Աղաջանյան

Արման Գևորգյան

Զոհրաբ Բարսեղյան

Սուրեն Բաբաջանյան

Սպարտակ Սարգսյան

Կարեն Նիկոյան

կողմ ( 6 ) դեմ ( 0 ) ձեռնպահ ( 0 )

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2012թ. նոյեմբերի 30

Գ. Վարդանաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐ[illegible] ՄԱՐԶԻ
[illegible] ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 201[illegible]Թ ՎԱԿԱՆԻ [illegible] 30-Ի
ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ԹԻՎ [illegible] ՈՐՈՇՄԱՆ

| | 2012 Փաստացի | | | 2013 Հաստատված | | | տարբերությունը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | պաշտոնի անվանումը | պաշտոնի դրույքաչափը | հ/հ | պաշտոնի անվանումը | պաշտոնի դրույքաչափը | հ/հ | պաշտոնի անվանումը | պաշտոնի դրույքաչափը |
| 1 | Համայնքի ղեկավար | 150,0 | 1 | Համայնքի ղեկավար | 175,0 | 1 | -- | 25,0 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 85,0 | 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 105,0 | 2 | -- | 20,0 |
| | **Ընդամենը** | 235,0 | | **Ընդամենը** | **280,0** | | | **45,0** |
| 1 | Աշխ.քարտուղար /1.2-1/ | 95,0 | 1 | Աշխ.քարտուղար /1.2-1/ | 115,0 | 1 | -- | 20,0 |
| 2 | Առաջատար մասնագետ /3.1-1/ | 75,0 | 2 | Առաջատար մասնագետ /3.1-1/ | 93,0 | 2 | -- | 18,0 |
| 3 | Առաջատար մասնագետ /3.1-2/ | 75,0 | 3 | Առաջատար մասնագետ /3.1-2/ | 93,0 | 3 | -- | 18,0 |
| 4 | Առաջատար մասնագետ /3.1-3/ | 75,0 | 4 | Առաջատար մասնագետ /3.1-3/ | 93,0 | 4 | -- | 18,0 |
| 5 | 1-ին կարգի մասնագետ /3.2-1/ | 50,0 | 5 | 1-ին կարգի մասնագետ /3.2-1/ | 63,0 | 5 | -- | 13,0 |
| 6 | 1-ին կարգի մասնագետ /3.2-2/ | 50,0 | 6 | 1-ին կարգի մասնագետ /3.2-2/ | 63,0 | 6 | | 13,0 |
| | **Ընդամենը** | **420,0** | | **Ընդամենը** | **520,0** | | | **100,0** |
| 1 | Փականագործ խ/ջ | 50,0 | 2 | Փականագործ խ/ջ | 63,0 | 2 | --- | 13,0 |
| | **Ընդամենը** | **50,0** | | **Ընդամենը** | **63,0** | | --- | **13,0** |
| 1 | Վարորդ | 50,0 | 1 | Վարորդ | 63,0 | 1 | --- | 13,0 |
| 2 | Հավաքարար | 40,0 | 2 | Հավաքարար | 52,0 | 2 | --- | 12,0 |
| 3 | Պահակ | 33,0 | 3 | Պահակ | 47,0 | 3 | | 14,0 |
| 4 | Սպորտ կոմիտեի ղեկավար | 50,0 | 4 | Սպորտ կոմիտեի ղեկավար | 63,0 | 4 | --- | 13,0 |
| | **Ընդամենը** | 173,0 | | **Ընդամենը** | 225,0 | | | 32,0 |
| | Ամբողջը | 878,0 | | Ամբողջը | 1088,0 | | | 210,0 |

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ-ՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ԹԻՎ 19-Ա ՈՐՈՇՄԱՆ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ակումբի վարիչ | 50,0 | 1 | Ակումբի Վաիչ | 63,0 | 1 | | 13,0 |
| | Ընդամենը | **50,0** | | Ամբողջ | 63,0 | | | **13,0** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի
Վարդանաշեն համայնք, 1-ին փողոց 26 շենք հեռ. 077 07 00 10

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30»նոյեմբեր 2012թվականի թիվ 20-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով .

Համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Վարդանաշեն համայնքի վարչական տարածքում 2013թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Արթուր Աղաջանյան

Արման Գևորգյան

Ջոհրար Բարսեղյան

Սուրեն Բաբաջանյան

Սպարտակ Սարգսյան

Կարեն Ղոնյան

կողմ ( 6 ) դեմ ( 0 ) ձեռնպահ ( 0 )

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2012թ. նոյեմբերի 30.

Գ. Վարդանաշեն

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ N 20 -Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինանարարական նախագծին համապատասխան ՝ նոր շենքերի , շինությունների (ներառյալ `ոչ հիմնական)շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար ՝

1/ մինչև երեք հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի ,այդ թվում ՝ այգեգործական (ամառանոցային )տների ,ինչպես նաև մինչև երկու հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ

2/ սույն կետի «1-ին » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ՝

ա/ երկու հարյուր մեկից մինչև հինգ հարյուր քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝տաս հազար դրամ

բ/ հինգ հարյուր մեկից մինչև հազար քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տասնհինգ հազար դրամ

գ/ հարյուր մեկ և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար երեսուն հազար դրամ . ոչ հիմնական շինությունների տեղադրման համար ՝

3/ մինչև քսան քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հազար դրամ .

4/ քսան և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ երեք հազար դրամ :

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , վերականգնման , արդիականացման , աշխատանքների ( բացառությամբ ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով ՝

1/ չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝ երկու հազար դրամ .

2./ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա )հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը ՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով .

3/նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա ) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա , սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը :

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար դրամ

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ .

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար . մեկ հազար հինգ հարյուր դրամ ;

5. Համայնքի տարածքում ՝

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար ՝ երեք հարյուր հիսուն դրամ .

2/ հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ :

6. Համայնքի տարածքում առևտրի , հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները ), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար ՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար ՝ քսան հինգ հազար դրամ .

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ .

3/ բաղնիքների (սաունաների) համար ՝ երկու հարյուր հազար դրամ .

4/ խաղատների կազմակերպման համար հինգ հարյուր հազար դրամ

5/ շահումով խաղերի կազմակերպման համար ՝երկու հարյուր հիսուն հազար դրամ .

6/ վիճակախաղերի կազմակերպման համար ՝ մեկ հարյուր հազար դրամ :

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ երկու հազար դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների )ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է՝ հինգ հազար դրամ :

9.Համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման համար սահմանել տեղական վճար յուրաքանչյուր շնչի հաշվով տարեկան մեկ հազար դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեք հազար դրամ :

11. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման համար՝ գյուղապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հինգ հազար դրամ :

12. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար ՝ մասնակիցներից վճար տաս հազար դրամ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի
Վարդանաշեն համայնք, 1-ին փողոց 26 շենք հեռ. 077 07 00 10

# ՈՐՈՇՈՒՄ

«30»նոյեմբեր 2012թվականի թիվ 21-Ա

ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ ՏԱՍՆՀԻՆԳ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐՈՎ 300000 ԴՐԱՄ (ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ) ԴՐԱՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով.

## ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Վարդանաշեն համայնքի թվով տասնհինգ սոցիալապես անապահով ընտանիքներին ընդհանուր գումարով 300000դրամ (երեք հարյուր հազար ) դրամ ֆինանսական օգնություն տրամադրել համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Արթուր Աղաջանյան

Արման Գևորգյան

Զոհրաբ Բարսեղյան

Սուրեն Բաբաջանյան

Սպարտակ Սարգսյան

Կարեն Ղոնյան

կողմ ( 6 ) դեմ ( 0 ) ձեռնպահ ( 0 )

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2012թ. նոյեմբերի 30

Գ. Վարդանաշեն

Հավելված
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ԹԻՎ [illegible] ՈՐՈՇՄԱՆ

Վարդանաշեն համայնքի թվով 15/ տասնհինգ/. անապահով ընտանիքների

1. Ծամոյան Նազիկ -20000 դրամ
2. Վարդանյան Սամվել-20000 դրամ
3. Վահանյան Մարիետա -20000 դրամ
4. Սարիբեկյան Էդիկ - 20000 դրամ
5. Սահրյան Քյարամ -20000 դրամ
6. Սահակյան Աշոտ-20000 դրամ
7. Սահակյան Հարազատ-20000 դրամ
8. Հազեյան Հայկ-20000 դրամ
9. Թումանյան Հրաչ-20000 դրամ
10. Եղիազարյան Ռոզա-20000 դրամ
11. Բարսեղյան Նարինե -20000 դրամ
12. Դանիելյան Քնարիկ -20000 դրամ
13. Պողոսյան Գվիդոն -20000 դրամ
14. Սարգսյան Սպարտակ-20000 դրամ
15. Եղիզարյան Էմմա -20000 դրամ

Ընդամենը՝ 300,0 (երեք հարյուր հազար դրամ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վարդանաշեն համայնք, 1-ին փողոց 26 շենք հեռ. 077 07 00 10

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30»նոյեմբեր 2012թվականի թիվ 22-Ա

ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԹՎՈՎ ՅՈԹ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐՈՎ 550000 ԴՐԱՄ /ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ/ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով.

## ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Վարդանաշեն համայնքի գյուղապետարանի թվով յոթ աշխատակիցների ընդհանուր գումարով 550000 դրամ / հինգ հարյուր հիսուն հազար դրամ / գումարի չափով տալ պարգևատրում համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Արթուր Աղաջանյան
Արման Գևորգյան
Զոհրաբ Բարսեղյան
Սուրեն Բաբաջանյան
Սպարտակ Սարգսյան
Կարեն Ղոնյան

կողմ ( 6 ) դեմ ( 0 ) ձեռնպահ ( 0 )

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2012թ. նոյեմբերի 30
գ. Վարդանաշեն

Հավելված
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ի
ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ԹԻՎ 22-Ա ՈՐՈՇՄԱՆ

## ՎԱՐԴԱՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

| | | |
|---|---|---|
| 1.Մանուկյան | Արթուր | -120000դրամ |
| 2.Զաքարյան | Էդիկ | -85000 դրամ |
| 3.Հայրապետյան | Աշոտ | -95000դրամ |
| 4.Պողոսյան | Սուսաննա | -75000դրամ |
| 5.Սմբատյան | Աշոտ | -75000դրամ |
| 6.Վարդևանյան | Անգին | -50000դրամ |
| 7.Ավետիսյան | Արգար | -50000դրամ |

Ընդամենը 550000 դրամ /հինգ հարյուր հիսուն հազար դրամ/